«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «ընթերցանությունը որպես գործիք տարրական դասարաններում »

Առարկան՝ դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Գեղեցիկ Սերյոժայի Եսայան

Ուսումնական հաստատություն « Երևանի հ. 175 միջնակարգ դպրոց»

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 3

ԳԼՈՒԽ 1

1.1 Կարդալու կարողությունների զարգացումը կրտսեր դպրոցում -------4

1.2 Կարդալու որակական հատկանիշներ---------- 6

ԳԼՈՒԽ 2

Կարդալու կարողության զարգացման արդյունավետ մոտեցումները տարրական դպրոցում----------8

Հետազոտական մաս իմ փորձից ---------- 9

Եզրակացություն---------- 19

Օգտագործած Գրականություն---------- 20

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Անառարկելի է, որ ընթերցանությունը գիտելիքների ձեռքբերման, բազմակողմանի զարգացման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուր է: Կարդալու միջոցով հարստանում ու զարգանում են աշակերտների երևակայությունը, հոգեկան հերաշխարհը, խոսքը, հաշակը: Կարդալու կարողությունն այսօր ոչ թե նպատակ, այլ միջոց է՝ նոր գիտելիքների և տեղեկատվության ձեռքբերման համար: Այսօր ուսուցչի խնդիրը ավելի շատ աշակերտների գործունեության նպատակաուղղումն է, սովորել սովորեցնելը, քան միայն գիտելիքներ հաղորդելը, քանի որ միայն ուսուցման ընթացքում հնարավոր չէ այնքան տեղեկություն փոխանցել և սովորեցնել, որքան անհրաժեշտ է նրա զարգացման համար: Ուստի, այսօր համար մեկ նպատակը գրքից օգտվելու կարողության ձևավորումն է: Որպեսզի երեխան սիրի գիրքը և կարդա, պետք է ուսուցիչը լավ կարդալ սովորեցնի աշակերտներին ու օգնի նրանց հաղթահարել կարդալու ընթացքում առաջացած դժվարությունները:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել ընթերցած բնագրի շուրջ տարվող աշխատանքները, օգտագործվող մեթոդները, առաջադրանքները, որոնց շնորհիվ կդաստիարակվի ընթերցասիրություն, և ընթերցանությունը կդառնա անձի բազմակողմանի զարգացման միջոց ու կնպաստի ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտման խնդիրներն են.

Ուսումնասիրել և ներկայացնել լավ ընթերցողներ պատրաստելու ուղիներն ու առանձնահատկությունները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ կարդալու կարողությունների զարգացմանը նպաստող աշխատանքները կրտսեր դպրոցում:

Սեփական փորձով ցույց տալ կրտսեր դպրոցականների կարդալու տեխնիկայի և որակական հատկանիշների ձևավորման ընթացքը:

Հետազոտման ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ բացատրական, զրույց , բանավեճ, ուղղորդված ընթերցանություն, ընտրովի ընթերցանություն , կրկնակի գրառման օրագիր, ընդհատված ընթերցանություն, դերային ընթերցում, խաթարված ընթերցանություն, մտագրոհ, քառաբաժան, կանխագուշակումներով կարդալը, փոխգործուն նշանների համակարգը, երբ կողպեք՝ մեկ բանալի և այլն:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից , եզրակացությունից, օգտագործած գրականության ցանկից: Աշխատանքը բաղկացած է 19 էջից:

Առաջին գլխում ներկայացված է մայրենի լեզվի դասընթացի հիմնական նպատակներից մեկի՝ ընթերցանության կարևորության, ընթերցանության տեխնիկայի և որակական հատկանիշների ձևավորման անհրաժեշտության մասին:

Երկրորդ գլխում ներկայացված են այն հիմնական մեթոդների, ուղիների, առաջադրանքների ընտրությունը, որոնք նպաստում են լավ կարդացողի ձևավորմանը:

Եզրակացությունում ներկայացված են ուսումնասիրության արդյունքում կատարած եզրահանգումները: Վերջում ներկայացված է օգտագործած գրականության ցանկը :

Գլուխ1.

1.1Կարդալու կարողությունների զարգացումը կրտսեր դպրոցում

Մայրենի լեզվի դասընթացի հիմնական նպատակներից մեկը լավ ընթերցողներ պատրաստելն է: Իսկ ի՞նչ է նշանակում «լավ ընթերցող». մի՞թե երեխաները, ճանաչելով հայերեն այբուբենի բոլոր տառերը և դրանք վարժ միավորելով բառերի ու նախադասությունների մեջ, արդեն լավ ընթերցող չեն: Գրաճանաչ լինել՝դեռ չի նշանակում ակտիվ ընթերցել կարողանալ: Կարդալու կարողության ձևավորման առաջին աստիճանի հաղթահարումից հետո անհրաժեշտ է լուրջ աշխատանքներ ծավալել սկսնակ ընթերցողների մեջ կարդալու որակական հատկանիշների ձևավորման ուղղությամբ: Այդ աշխատանքների հիմնական նպատակը սովորողների մեջ կարճ ժամանակում հնարավորինս շատ և հիմնարար տեղեկության ձեռքբերման կարողության ձևավորումն ու զարգացումն է, քանի որ Ա. Ղարիբյանը ժամանակին ասել է. «Բացատրական ընթերցանության հիմնական նպատակներից է կարդալ սովորեցնելը, որովհետև կարդալու ուսուցումը լեզվի ուսուցման ամենահիմնական ու պատասխանատու բաժինն է: Թե՛ լեզվի մյուս բաժինների և թե՛ միջնակարգի բոլոր այլ առարկաների յուրացումն ապահովվում է աշակերտի կարդալու հմտությամբ: Անհնարին է ծանոթանալ որևէ գիտության հիմունքներին, առավելևս դառնալ ժամանակակից կուլտուրայի պահանջների բարձրության վրա կանգնած մարդ, եթե կարդալ չգիտես: Կարդալու ուսուցման որակից է կախված մյուս առարկաների ուսուցման հաջողությունը, իսկ կարդալու հմտության հիմնական որակը որոշվում է կարդալու ուսուցմամբ տարրական դասարաններում»:[3, էջ 256]: Կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների զարգացումը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ կարդացող աշակերտներն ավելի լավ են սովորում ցանկացած առարկա, քան կցկտուր կարդացողները: Բանն այն է, որ վատ կարդացողն ընթերցելիս իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում է կարդալու գործողությանը և չի ընմբռնում կարդացածի բովանդակությունը, հիմնական միտքը և այլն: Լավ կարդացողն արագ է ընմբռնում, հասկանում բնագիրը, որովհետև նա ժամանակ չի ծախսում կարդալու գործողության վրա:Կարդալու կարողության ձևավորումը կրտսեր դպրոցի մայրենիի դասերի հիմնական նպատակն է եղել և մնում է որպես այդպիսին: Կարդալու գործողությունը հոգեկան մի բարդ երևույթ է, որի վերլուծությունը ուսուցչին ոչ միայն կօգնի հնարավորինս ճիշտ ընմբռնելու այդ գործընթացի առանձին կողմերն ու դրանց ուսուցման դժվարությունները, այլև կնպաստի այդ գործընթացի մեթոդապես ճիշտ կառուցմանն ու արդյունավետ իրականացմանը: Կարդալու հմտությունը խիստ գործնական կարողություն է, սակայն ինքնազարգացման, անձի դաստիարակության, երեխաների ընդհանուր զարգացման, հոգեկան և մտավոր աշխարհի հարստացման ամենաարդյունավետ միջոցն է. Այն խորացնում է մտածողությունը, միտքը մղում է որոնումների և երևույթների վերլուծության: Ղ. Աղայանը նկատում է, որ ընթերցանության միակ արժեքն այն է, որ ընթերցողի առջև բացում է անհատնում փորձերի շտեմարաններ, որ մարդ իր տանը նստած կարդալու միջոցով շրջում է ամբողջ աշխարհը, դուրս գալիս երկրագնդից, մտնում Երկրի խորքերը, իջնում ծովի ու օվկիանոսի հատակը, իմանում է տարբեր ազգերի կենցաղի, սովորույթների, ապրելակերպի մասին: «Բայց և այնպես, սոքա բոլորը փորձեր են, որոնք այն ժամանակ միայն կարող են լայնացնել ընթերցողի

հասկացողության շրջանը, երբ ընթերցողի բնությունը նոցա մարսելու չափ զարգացումն ունի, այդ փաստերից, այդ հանգամանքներից ուղիղ հասկացություն կազմելու կարողություն ունի» [4, էջ 361]: Մարդկության մտքի գանձը այն անձանց ժառանգությունն է, ովքեր կարդալու կարողություն ունեն: Սա նրանց հնարավորություն է տալիս օգուտ քաղելու այդ գանձից և ինքնագոհ հոգալու իրենց մտավոր մշակության համար; Ով որ ընթերցելու ունակություն չունի, այդ բոլորը նրա համար մեծ մասամբ անմատչելի է: Նախորդների թողած մտավոր գանձը նրան անհասանելի է, ուրեմն և մտավոր մշակության գլխավոր աղբյուրը նրա համար փակ է: «Առանց կարդալ իմանալու առանձին անհատը կարող է յուր շրջապատող կյանքի մեջ որևէ նշանավոր տեղ բռնել: Ուստի և ուր որ գրավոր խոսքը գործադրություն և հարգանք, իսկ դպրոցը համակրողներ է ունեցել, այնտեղ ընթերցանության հոգատարությունը եղել է դպրոցի ծանրակշիռ խնդիրներից մեկը»[4, էջ 301]: Ընթերցանությունը ոչ միայն մտագործունեության էական բաղադրիչ է, այլև կրթության բովանդակային մաս, հետևաբար այն պետք է կազմակերպվի չափորոշչային պահանջներին համապատասխան և ունենա չափելի վերջնարդյունք:

Եվ այսպես՝ տարրական դպրոցի սովորողը պետք է կարողանա՝

1. Լսել, հասկանալ իրեն ուղղված խոսքը
2. Հասկանալով և արտահայտիչ ընթերցել արձակ և չափածո գրական տեքստեր
3. Տարբեր ձևերով և եղանակներով վերարտադրել լսածը, կարդացածը
4. Արտահայտել և հիմնավորել սեփական տեսակետը
5. Արտահայտիչ արտասանել բանաստեղծություններ, հեքիաթներ, առակներ՝ շեշտադրելով հիմնական գաղափարը
6. Ձևակերպել հարցեր իրեն հետաքրքրող թեմաների վերաբերյալ [1, էջ15]

1.2 Կարդալու որակական հատկանիշներ

Ինչպես արդեն նշեցինք, կրտսեր դպրոցում մայրենիի դասընթացի կարևոր բաղադրիչներից է ընթերցանությունը, որի նպատակն է զարգացնել կրտսեր դպրոցականների կարդալու, վերարտադրելու կարողությունները, հարստացնել նրանց խոսքն ու բառապաշարը, ճանաչողական և լեզվական գիտելիքները, ձևավորել արժեքների համակարգ: Դեռևս գրաճանաչության այբբենական շրջանից սկսած պետք է աշխատանքներ տանել սովորողների կարդալու որակական հատկանիշների ձևավորման ուղղությամբ:

Կարդալու որակական հատկանիշներն են՝

- Ճիշտ կամ անսխալ կարդալ
- Վարժ կամ սահուն կարդալ
- Հասկանալով կամ գիտակցելով կարդալ

- Արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ
- Արագ կարդալ առաջարկված բնագիրը ճիշտ կամ անսխալ կարդալ ասելով՝ հասկանում ենք բնագրի բարձրաձայն, պարզ ու հստակ ընթերցումը, երբ աշակերտն ընթերցելիս բաց չի թողնում ոչ մի տառ, վանկ, երբ բառի մեջ չի փոխում առանձին տառերի ու վանկերի տեղերը, դրանք չի շփոթում ուրիշ վանկերի և տառերի հետ, երբ փոփոխության չի ենթարկում բառի բերականական ձևը (այսինքն՝ գոյականի հոլովը, թիվը, բայի դեմքն ու թիվը, ժամանակը), երբ բառը չի շփոթում այլ բառի հետ, երբ նախադասության մեջ բաց չի թողնում առանձին բառեր կամ ավելացնում նորերը, երբ բառերն ավելորդ անգամ չի կրկնում, երբ բառերն արտասանում է գրական հայերենի արտասանության չափանիշներին համապատասխան: [5, էջ116]
- Սահուն կամ վարժ կարդալ ասելով՝ հասկանում ենք առաջադրված նյութի՝ ամբողջական բառերով, առանց ընդհատելու, հնարավոր չափով արագ ու սահուն ընթերցումը, ընդ որում, կարդալու արագությունը պետք է համապատասխանի սովորական խոսակցության արագությանը՝ նպաստելով ընթերցած նյութի բովանդակության, գաղափարի ըմբռնմանը, ենթատեքստի կռահմանը (ինչպես կարդացողի, այնպես էլ ունկնդիրների կողմից): [5, էջ119]
- Հասկանալով կամ գիտակցելով կարդալ նշանակում է կարդացածը հասկանալ , ճշտությամբ վերարտադրել, պահպանել մտքի հաջորդականությունը և տրամաբանական կապը, վերլուծել կարդացածը: Վերլուծելը, թերևս, այն կարևոր և բարդ կարողություններից մեկն է, որը փորձում են ձևավորել տարրական դպրոցում: Հասկանալով կարդալու կարողության մշակումը ընթերցանության գերխնդիրն է: [5, էջ119]
- Կարդալը արտահայտիչ կամ գեղարվեստորեն է համարվում այն ժամանակ, երբ կարդացողը կարողանում է մտքի զգալ և իր ձայնի ելևէջներով, դադարներով վերակենդանացնել այն ապրումներն ու հույզերը, որ հեղինակը դրել է իր տողերի մեջ: Արտահայտիչ կարդալ սովորեցնելու հիմքում պետք է ընկած լինի հայերենի հիմնական կետադրական նշանների ըմբռնումը և կարդալու գիտակցականությունը: [5, 119էջ]
- Արագ կարդալու որակական այս հատկանիշը՝ որպես ժամանակի հետ կապված կենսական պահանջ, նոր է ձևավորել: Արագ կարդալու միջոցով կարճ ժամանակամիջոցում շատ տեղեկություն կարելի է ստանալ : [5, 119էջ]

Հոգեբանների կարծիքով, հասկանալով կարդալու համար, ընթերցողը առաջին հերթին պետք է կարդա արագ: Խոսքը լավ կարդալու մասին է, այսինքն՝ կարդալ խոսելու տեմպին համահունչ: Այդ հանգամանքը նրանք մեկնաբանում են որոշ տեսանկյուններից:

Ուսուցման տեսանկյունից: Եթե աշակերտը կարողանում է արագ կարդալ, իսկ միջին օղակում տնային հանձնարարությունները 5-8 էջ են կամ 6500 բառ, ապա 6500: 60 = 107բոպե: Մոտ 2ժամ անհրաժեշտ է որպեսզի նյութը կարդա գոնե 1 անգամ: իսկ չէ՞ որ պետք է այն կարդալ 2-3 անգամ և պետք է կատարի այլ տնային հանձնարարություններ:

Զարգացման տեսանկյունից: Արագ կարդում են այն մարդիկ, որոնք շատ են կարդում: Գործընթացում զարգանում է գործնական հիշողությունը և ուշադրության կայունությունը: Այս երկու ցուցիչներից է կախված նաև ընթերցողի մտավոր աշխատունակությունը:

Դաստիարակության տեսանկյունից: Անառարկելի է, որ ընթերցողների դաստիարակությունը պայմանավորված է նրանց պարտավորություններից և զգայունակությունից: Եթե երեխան նախորդ դասարաններում լավ չի սովորել, հաջորդ դասարաններում ցածր է լինում նրա առաջադիմությունը: Աշակերտների համոզմամբ՝ սովորեն, չսովորեն՝ միջակություն կլինի: Ուրեմն՝ գերադասելի է չսովորելը:

Տնտեսական տեսանկյունից : Առաջին հայացքից թվում է, թե այն շատ հեռու է կրթական համակարգից: ԱՄՆ-ի շատ ձեռնարկություններում կառավարական աշխատանքի չեն ընդունում այն անձանց, ովքեր 1բոպեում չեն կարդում 400 բառ: Համարվում է, որ նա «կխորտակվի թղթերի մեջ »:

Գաղափարա-բաղաքական տեսանկյունից: Եթե 6 թերթից բաղկացած թերթում կա մոտ 40000 բառ և կարդացողն էլ կարդում է 80 բառ, այն կարդալու համար անհրաժեշտ է 500 բոպե, մոտ 8 ժամ: Թվում է՝ անգրագիտություն չկա, սակայն կիսագրագիտությունն էլ ոչ մի բանով լավ չէ:

Գլուխ 2.

Կարդալու կարողության զարգացման արդյունավետ մոտեցումները տարրական դպրոցում

Տարրական դպրոցում ընթերցողական կարողությունների ձևավորումն իրականացվում է բացատրական ընթերցանության մեթոդով, որը հայ դպրոցում գործածվել է դեռևս Խ. Աբովյանի կողմից: Հետագայում այն ճանաչվեց շատ մեթոդիստ-մանկավարժների կողմից մշակվել, կատարելագործվել է՝ դառնալով բնագրերի շուրջ տարվող բազմաբերտ և բազմակողմանի աշխատանքների իրականացման մի կուռ համակարգ: Այսօր էլ մայրենի լեզվի ընթերցարաններում տեղ գտած նյութերը սովորողների կողմից ուսումնասիրվում են հիմնականում բացատրական ընթերցանության մեթոդով:

Հետազոտական մաս իմ փորձից

Ես փորձել եմ կրտսեր դպրոցականների մեջ կարդալու կարողության զարգացումն ապահովել նաև մեկ այլ՝Ռիվինի մեթոդիկայի կիրառմամբ [5, էջ 31-47]: Այն նախատեսված է հենց տեքստերի ուսումնասիրման համար և կարող է կիրառվել կարդալու վարպետության տարբեր՝ ասենք, օրինակ,

«բառային», «նախադասությունային», «պարբերությունային» մակարդակների դեպքում: Բանն այն է, որ Ռիվինի մեթոդիկայի էությունը թեմայի հատվածաբար ուսումնասիրման մեջ է, այսինքն՝ սովորողները տեքստը բաժանում են որոշակի (ոչ մեծ) հատվածների և աշխատում այդ հատվածների վրա: Ընդ որում՝ որպես ուսումնասիրվող հատված կարող են հանդիսանալ պարբերությունը, նախադասությունը կամ բառը: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս Ռիվինի մեթոդիկան կիրառելու դպրոցի բոլոր դասարաններում՝ սովորողների մեջ կարդալու զարգացման բառային, նախադասությունային, պարբերությունային մակարդակներին համապատասխան: Ներկայացնեմ երրորդ դասարանում Ռիվինի մեթոդիկայի կիրառման իմ փորձը: Նախապատրաստական աշխատանքներ կատարելիս՝ առաջին հերթին ընտրում եմ ընթերցարանում տեղ գտած այն նյութերը, որոնք պետք է սովորողներն ուսումնասիրեն դասարանում: Այնուհետև կազմում եմ հաշվառման աղյուսակը և փակցնում պատին: Աղյուսակում պետք է կատարվեն նշումներ աշխատանքի ընթացքի վերաբերյալ՝ ուսուցչի կամ աշակերտների կողմից: Եթե նույնիսկ սկզբնական շրջանում նշումները կատարում է ուսուցիչը, ապա նախընտրելի է՝ աստիճանաբար այդ աշխատանքը թողնել աշակերտներին: Հաշվի առնելով կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները՝ պատրաստում եմ տարբեր հուշաթերթեր: Հուշաթերթերը նախատեսում եմ զույգերի համար, յուրաքանչյուր սեղանին դնում եմ մեկական հուշաթերթիկ: Սովորաբար մեկ-երկու բնագրի ուսումնասիրությունից հետո աշակերտներն աշխատում են առանց հուշաթերթերի: Տեքստերում տեղ գտած նորածանոթ կամ անհասկանալի բառերի բացատրության համար անհրաժեշտ է դասարանում ունենալ բացատրական, հոմանիշների, հականիշների դպրոցական բառարաններ (յուրաքանչյուրից 2-3 հատ): Հուշաթերթիկում նշված է զույգում աշխատելու կարգը: 1.Թեման ստանալուց հետո աղյուսակում քո անվան դիմաց նշու՛մկատարիր2.Տետրում նշի՛ր թեմայիդ վերնագիրը: 3. Զու՛յգ ընտրիր սովորողներից և տետրում նշի՛ր նրա անունը, թեմայի վերնագիրը կամ համարը: 4. Բարձրաձայն կարդա՛ բնագրիդ առաջին հատվածը: 5. Բնագրիդ առաջին հատվածը կարդա՛ նախադասություն առ նախադասություն և քննարկի՛ր զուգընկերոջդ հետ: 6. Յուրաքանչյուր նախադասության ընթերցումից հետո տետրում գրի՛ր անհասկանալի կամնորածանոթ բառերը, գրիր դրանց բացատրությունը: 7. Ամբողջ հատվածը քննարկելուց հետո զուգընկերոջդ հետ վերնագրի՛ր այն: 8. Առաջին հատվածի վերնագիրը գրի՛ր տետրում: 9. Նույն ձևով օգնի՛ր զուգընկերոջդ մշակել իր բնագրի առաջին հատվածը: 10. Շնորհակալություն հայտնի՛ր զույգիդ և հրաժեշտ տուր նրան: 11. Երկրորդ հատվածի մշակման համար ընտրի՛ր նոր զույգ: 12. Պատմի՛ր նրան քո բնագրի առաջին հատվածի բովանդակությունը: 13. Նոր զույգիդ օգնությամբ մշակի՛ր թեմայիդ երկրորդ հատվածը նույն ձևով: 14. Ուշադիր լսի՛ր նոր զուգընկերոջդ պատմածը իր նյութի վերաբերյալ: 15. Օգնի՛ր նրան մշակել իր թեմայի հաջորդ հատվածը: 16. Շնորհակալություն հայտնի՛ր զույգիդ և հրաժեշտ տու՛ր նրան: 17. Հաջորդ հատվածի մշակման համար նոր զուգընկեր գտի՛ր:

Թեմաները բաշխվում են այնպես, որ 2-3 աշակերտ ունենա նույն թեման: Ուսուցչի դերը թեմայի մշակմանժամանակ: Աշխատանքի ողջ ընթացքում կատարում եմ ոչ միայն կազմակերպողի, կոորդինացնողի

դեր, այլև անմիջական մասնակցություն եմ ունենում սովորողների թեմաների որոշակի հատվածների մշակմանը՝ հերթով զույգ կազմելով նրանց հետ: Միայն այդպես կարող եմ յուրաքանչյուր աշակերտի սովորեցնել ճիշտ պահպանել պարբերության մշակման ալգորիթմը, ստուգել մշակած պարբերությունների յուրացման մակարդակը, ուղղություն տալ զույգում իրականացվող աշխատանքների վերաբերյալ: Ամեն անգամ աշխատանքի վերլուծության (ռեֆլեքսիայի) ժամանակ անդրադառնում եմ ընդհանուր բնույթի թերություններին, սխալներին, տալիս եմ համապատասխան ցուցումներ՝ դրանցից խուսափելու նպատակով: Շատ կարևոր է նաև իրենց հաջողությունների, ձեռքբերումների համար աշակերտներին խրախուսելը: Բայց դա չպետք է կրի ընդհանրական բնույթ (Ապրե՛ք, լավ աշխատեցիք: Ամեն ինչ շատ լավ է և այլն), այլ կոնկրետ օրինակներով պետք է ցույց տալ, թե ինչն են արդեն կարողանում անել երեխաները (Ձեր վերնագրերն արդեն ավելի կոնկրետ են արտահայտում հատվածների բովանդակությունը:): Աշխատում եմ, որ յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրության ժամանակ աշակերտի հետ առնվազն մեկ անգամ զույգ կազմեմ: Բայց հնարավոր է, որ դասարանում կլինեն աշակերտներ, որոնց հետ ավելի հաճախակի աշխատելու անհրաժեշտություն կզգացվի: Թեմայի հանձնումը. Սովորողը թեման կարող է հանձնել տարբեր կերպ: Նպատակահարմար է, որ նա ելույթ ունենա փոքր խմբի առջև, որում ընդգրկվել այն աշակերտները, ովքեր ուսումնասիրում են նույն թեման, ովքեր պետք է սկսեն ուսումնասիրել այն, նրանք, ովքեր վաղուց ուսումնասիրել են այն և ուզում են կրկնել, ինչպես նաև՝ ուսուցիչը: Սովորողը թեման կարող է հանձնել նաև միայն ուսուցչին: Տետրի գրանցման կարգը. Տետրի էջը բաժանվում է երկու անհավասար մասերի: Լայն հատվածի առաջին տողում գրվում է ստեղծագործության վերնագիրը: Էջի նեղ մասում՝յուրաքանչյուր պարբերության վերնագրի դիմաց, գրվում է զույգի անունը, նրա թեմայի վերնագիրը կամ համարը: Յուրաքանչյուր թեմա պետք է գրել նոր էջից: Ռիվինի մեթոդիկայի առավելությունները – Աշխատելով փոքրիկ հատվածներով՝ սովորողները ավելի լավ են յուրացնում նյութը: Յուրաքանչյուր պարբերություն քննարկելով զույգի հետ, վերլուծելով նրա բովանդակային մանրամասները՝ սովորողը ակտիվ խոսքային գործունեություն է իրականացնում, ինչը նպաստում է նրա խոսքի զարգացմանը (խոսելով են խոսել սովորում): – Թեման մշակելիս՝ սովորողները օգտվում են բառարաններից, այս կամ այն բառի, արտահայտության իմաստը հարցնում իրարից, ձեռք բերելով շատ կարևոր կարողություններ, հմտանալով հաղորդակցության մեջ: Յուրաքանչյուր հատվածի քննարկման արդյունքում սովորողները դուրս են բերում նրա հիմնական, գլխավոր միտքը և ձևակերպում այն վերնագրի տեսքով: Փոփոխական կազմով զույգերում աշխատելիս՝ աշակերտները սովորում են լսել իրար, օգնել, աջակցել միմյանց, համաձայնել, ընդհանուր որոշման գալ և ընդհակառակը՝ վիճել, պաշտպանել սեփական տեսակետը և այլն: Հետաքրքիր է, որ տարբեր մարդկանց հետ աշխատելիս, միևնույն հատվածը սովորողը պատմում է յուրովի՝ ամեն անգամ իր համար բացահայտելով նոր բաներ:

Աշակերտների կարդալու տեխնիկայի զարգացման նպատակով անհրաժեշտ է արտահայտիչ խոսքի կարողություններ մշակել դեռևս գրաճանաչության այբբենական շրջանում: Այդ աշխատանքը պետք է սկսել աշակերտներին ծանոթացնելով խոսքի տեխնիկայի բաղադրիչներին՝ շնչառություն, ձայն, հնչերանգ, առոգանություն:Հատուկ շնչառական վարժությունների միջոցով աշակերտներին առաջին հերթին պետք է սովորեցնել ճիշտ շնչել: Կարելի է կատարել առոգանությունը զարգացնող վարժանքներ: Այսպես՝ կարդալ մտքում, արտասանել շշուկով, դանդաղ, ցածրաձայն, կամաց, բարձրաձայն և արագ: Նախադասության մասին տարրական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտ է երեխաների ուշադրությունը հրավիրել հարցական, բացականչական, հրամայական, պատմողական նախադասությունների ելևէջավորման վրա և սովորեցնել տարբերել դրանց ընթերցման առանձնահատկությունները:

Հայտնի է արտահայտիչ ընթերցանության երկու եղանակ՝ բեմական և դասարանական: Անառարկելի է, որ արտահայտիչ կարդալու նախապայմանը բնագիրը լավ հասկանալն է: Կան նաև մի շարք արտաքին նշաններ, որոնք երեխաները պետք է ճանաչեն ու ըմբռնեն: Դրանք հայերենի կետադրական ու առոգանական նշաններն են: Աշակերտներն աստիճանաբար պետք է գիտելիքներ ձեռք բերեն արտասանական երանգավորման կամ հնչերանգի ու նրա բաղադրիչների մասին: Նրանց գիտակցությանը պետք է հասցվի, որ խոսքն ազդեցիկ ու լսելի դարձնելու համար կարևոր են ձայնի ու նրա ելևէջների փոփոխությունը՝ բարձրացումն ու ցածրացումը, կարդալու տեմպը, ռիթմը, դադարները, շեշտը, և սովորեցնի այդ ամենը կիրառել կարդալու ընթացքում: Կետադրական նշանների մասին նախագիտելիքներ տրվում են դեռևս գրաճանաչության նախապատրաստական շրջանում: [2, էջ 28, 52]: Հենց այս փուլում էլ անհրաժեշտ է աշակերտներին բացատրել, թե կետադրական կամ առոգանության որ նշանն ինչպես է կարդացվում: Եվ այդ կարողությունն աստիճանաբար զարգացնել մինչև երրորդ դասարանի վերջը: Որպեսզի երեխաները լավ ըմբռնեն և տարբերեն նախադասությունների հնչերանգը, ուսուցիչը կարող է դիմել հետևյալ հնարին:

Օգտագործել նույն բնագիրը և խաղի ընթացքում պահանջել կրկնել այն հրաման, բացականչություն, հարցում արտահայտող հնչերանգներով : Հետո նույն աշխատանքը կատարել նաև բնագրի վրա: Առաջարկում եմ կիրառել նաև ՏՀ տեխնոլոգիաներ. 5-7 բոպե ունկնդրել տալ գրական որևէ ստեղծագործություն՝աշակերտների ուշադրությունը հրավիրելով հարցական, բացականչական, հրամայական, պատմողական նախադասությունների հնչերանգին ու արտասանությանը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդպիսի դաս – վերլուծությունների, գրական ունկնդրումների արդյունքում ատիճանաբար ձևավորվում է երեխաների արտահայտիչ կարդալու հմտությունը, նրանք սովորում են առավել վարժ, սահուն, արտահայտիչ ու հասկանալով կարդալ բնագիրը:

Դերերով և խմբովին կարդալը ևս մեծապես նպաստում է կրտսեր դպրոցականների արտահայտիչ կարդալու կարողության զարգամանը, քանի որ այդ դեպքում նրանք գիտակցում են հերոսների խոսքը, հնչերանգը, ձայնի փոփոխությունները և ըստ այդմ էլ՝ ընտրում են կարդալու ճիշտ ձևն ու եղանակը:

Այս եղանակով ուսուցիչը պետք է սովորողներին զգացնել տա հեղինակի և հերոսների խոսքի հնչերանգային

տարբերությունները, բացատրի, որ հեղինակի խոսքը կարդում են դանդաղ, հանգիստ տոնով, պատմողական հնչերանգով, իսկ գործող անձերի կամ կերպարների խոսքերը՝ նրանց յուրահատուկ ձայնով ու հնչերանգով: Ընթերցանության արտահայտչականության ձևավորման նպատակով օգտագործում եմ տրամադրության բառարան: Այս, այսպես կոչված բառարանում, աշակերտները գրում են ընթերցվող բնագրի «ուրախ», «տխուր», «երջանիկ», «ոգևորված», «մեղմ» բառերը, վերլուծում են նյութը և եզրակացնում, թե հեղինակն ինչ զգացմունքներով ու հույզերով է գրել տվյալ ստեղծագործությունը: Ընթերցելիս՝ արդեն ձգտում են արտահայտել այդ տրամադրությունները:

Կարդալը մտավոր գործունեություն է, որը երեխայից պահանջում է տեսողական, լսողական և տարածական մտածողության զարգացում: Այն սկսվում է նրա կյանքի առաջին գրքի՝ «Այբբենարանի» նկարների «ընթերցումից»: Երեխաները մինչև տառաճանաչ դառնալը փորձում են ընկալել և պատմել նկարները՝ պահպանելով դրանց բովանդակային ամբողջականությունն ու տրամաբանական հաջորդականությունը: Գրաճանաչության նախայբբենական շրջանում կարևոր է ուսուցչի խոսքի ունկնդրումը: Գրաճանաչության այբբենական շրջանն արդեն առանձնանում է գրուսուցման և կարդալու նախնական կարողությունների ձևավորման աշխատանքներով: Կարդալու հմտությունների ձևավորման համար ես, յուրաքանչյուր հնչյուն–տառ անցնելիս, օգտագործում եմ իմ պատրաստած աբակը: Այն ունի 3 բաժին: Դասի սկզբում, որպես վարժանք, շարժելով աբակի համապատասխան բաժնի տառերը, կարդում ենք՝ սա, սի, սու: Հետո՝ աս, իս, ուս: Այսպես ավելացնում եմ յուրաքանչյուր սովորած հնչյուն– տառ: Օրինակ՝ բա, բի, բու, բե, բո, բը, աբ, իբ, ուբ, եբ, ոբ, ըբ: Ասեմ, որ միայն նոր սովորած հնչյուն–տառով չենք կազմում երկհնչյուններ, այլ կրկնում ենք նաև անցած տառերը: Այս վարժանքը օգնում է վանկը հեշտությամբ կարդալուն:



Հետայբբենական շրջանում ամրակայվում և զարգացվում են այբբենական շրջանում երեխաների ձեռք բերած կարդալու կարողությունները, որոնք հիմք են դառնում կարդալու որակական հատկանիշների ձևավորման համար: Ուսումնառության չորս տարվա ընթացքում աստիճանաբար զարգանում ու կատարելագործվում են կարդալու կարողությունները: Կանոնավոր կերպով կատարելով ներկայացված վարժանքները, խաղերը՝ վերջնարդյունքում կարող ենք զգալիորեն բարելավել ընթերցանության արագության ցուցանիշները, հասնել ընթերցանության առոգանության, արտահայտչականության, իմաստի ընկալման բարձր արդյունքների: Ստորև ներկայացնում եմ ընթերցանության տեխնիկայի ձևավորման և մոտիվացման ևս մի քանի տեխնիկաներ, վարժանքներ:

1.Բարձրաձայն կարդալ



	Ճիշտ	Սահուն	Հասկանալով /Ընկալում/	Արտահայտիչ /առոգանություն/	Արագ
Սովորող 1	+		+		
Սովորող 2	+	+	+	+	+
Սովորող 3	+		+	+	
Սովորող 4		+			

2.Մտքում կարդալ

3.Խմբով կարդալ

4.Սուր աչք: Ուղղանկյան պատկերի մեջ խառը հերթականությամբ գրել 1-30 թվերը կամ այբբենական շրջանում տառերը:



Աշակերտը ուշադիր նայում է պատկերին , ապա ուսուցիչը նրա հետ սկսում է հաշվել 1-ից մինչև 30՝ միջին տեմպով:

Հանձնարարություն: 1 հաշվարկին գտիր և ցույց տուր 1 թիվը, 2 հաշվին ՝ 2-ը ... և այդպես շարունակ:Ո՞րն է այս վարժանքի իմաստը. այն ընդլայնում է տեսողական դաշտը: Նույնը արվում է խառը գրված տառերով:

5.Շերլոկ Հոմս: Թղթի վրա խառը հերթականությամբ գրել տարբեր բառեր, ապա աշակերտին խնդրել որևէ բառ գտնել այդտեղից: Երեխան յուրաքանչյուր բառն ավելի արագ կկարողանա գտնել, քան նախորդը, քանի որ բառը փնտրելիս նա կարդում է մյուս բոլոր բառերը,մտապահում է , թե որը որից հետո է գրված:



Ո՞րն է այս վարժանքի իմաստը. ընդլայնվում է աշակերտի տեսադաշտը, աճում է կարդալու արագությունը:

6.Մոլորված տառեր:Տառերն ու բառերը երբեմն կորչում են, բայց նույնիսկ առանց մի քանի տառի կամ բառի հնարավոր է կարդալ:



7.Լուսանկարող աչք: Գրատախտակին սյունակով գրված են բառեր, որոնք աշակերտները մի որոշ ժամանակ կարդում են , ապա ուսուցիչը փակում է սյունակը, իսկ աշակերտները հիշողությամբ ասում են՝ ինչ բառեր են գրված:





8.Դինամիկ ընթերցում: Գրատախտակի կամ քարտի վրա գրված է 5-7 բառից բաղկացած սյունակ, գրված բառերի քանակը հերթով ավելանում է՝ բառերի մեջ եղած տառերի աստիճանական աճով:

9.Հերթ: Յուրաքանչյուր աշակերտ կարդում են մինչև առաջին սխալը:

10 .Քարշակ. ա/ ուսուցիչը բարձրաձայն կարդում է ՝ փոխելով ընթերցման արագությունը: Աշակերտները նույնպես կարդում են բարձրաձայն՝ փորձելով հետ չմնալ ուսուցչից: բ/ ուսուցիչը բարձրաձայն կարդում է,

երեխաները կարդում են մտքում: Ուսուցիչը դադարում է կարդալ, աշակերտները ցույց են տալիս այն բառը, որտեղ կանգ է առել ուսուցիչը:

*11.*Թակարդ: Ուսուցիչը կամ վարժ կարդացող աշակերտը կարդում է մի տեքստ, որից հետո բաժանում է աշակերտներին նույն տեքստը, որտեղ որոշ բառեր փոխված են հոմանիշներով:Աշակերտները պետք է գտնեն այդ բառերը:[9, էջ30]





*12.*Թռիչք: Աշակերտները կարդում են բառը մեկ՝ մի բառ կարդալուց հետո բաց են թողնում կողքի բառը, կարդում են հաջորդը:

13.Գլուխ և պոչ: Ուսուցիչը սկսում է կարդալ նախադասությունը, երեխաները արագ գտնում են այն և շարունակում են միասին կարդալ:

14.Առաջինն ու վերջինը: Աշակերտներն ընթերցում են բառի առաջին և վերջին տառերը, տողի առաջին և վերջին բառերը, նախադասության առաջին և վերջին բառերը:

*15.*Պահմտոցի: Տեքստում գտնել որոշակի նշանով բառեր / օրինակ ՝ բառը սկսվում է Ա տառով, բաղկացած է երկու վանկից, գտնել գաղտնավանկի ը պարունակող բառերը կամ գտնել հնչյունների և տառերի անհավասարություն ունեցող բառերը և այլն/:

16 .Շրջանածև ընթերցում: Աշակերտները իրար հետևից մի քանի անգամ կարդում են փոքր տեքստը՝ բառ առ բառ:

17.Ով ավելի արագ: Գրատախտակին գրված է մի նախադասություն, իսկ սեղանին ցրված տեքստեր են դրված: Ուսուցչի հրահանգով աշակերտները տեքստերի մեջ փնտրում են այդ նախադասությունը: [9, էջ43]

18.Մեկ անգամ էլ: Աշակերտը կարդում է տեքստը 1 րոպե տևողությամբ: Ուշադրություն ենք դարձնում դեռևս միայն արագությանը, ճշում ՝ որտեղ է հասել: Ապա մի փոքր հանգստից հետո, նորից է 1 րոպե տևողությամբ կարդում նույն տեքստը, ճշում՝ որտեղ է հասել: Երրորդ անգամ արդյունքն ավելի լավ կլինի: Անպայման դիտարկումներ է անում՝ մոտիվացվելով, տեսնելով իր առաջընթացը 3 րոպեում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ուսումնասիրելով տարրական դասարաններում կարդալու տեխնիկայի զարգացմանը նպաստող արդյունավետ մոտեցումները, կատարեցինք հետևյալ եզրահանգումները.

1. Աշակերտը միայն այն ժամանակ է կարողանում ապացուցել, որ իր կարդացածը հասկանում է, երբ իր արտահայտած խոսքը համապատասխանում է ընթերցածի բովանդակությանը:
2. Հասկանալով և գիտակցաբար կարդալու կարողության ձևավորմանը օգնում է հատկապես բնագրերի շուրջ նյութի ընթերցումից հետո իրականացվող հարցազրույցը:
3. Ընթերցողական կարողությունների զարգացմանը նպաստում են բնագրերի շուրջ տարվող տարբեր վարժանքներն ու խաղերը:
4. Պետք է հասնել այն բանին, որ կարդալու մեխանիզմը դառնա միանգամայն ավտոմատ և չշեղի մտքերը: Պետք է ուշադիր լինել նաև գիրքը ընտրելու հարցում: Ընթերցանության նյութը պետք է մատչելի լինի, որպեսզի նոր բեռ չավելանա դասերի վրա: Այն պետք է կազմված լինի այնպես, որ ընթերցանության միջոցով հասու լինի գեղեցիկին, ընդարձակի մտահորիզոնը, գեղագիտական ճաշակ ու ազնիվ զգացումներ զարգացնի նրանց մեջ: Մատչելի լինելով հանդերձ՝ պետք է լուրջ լինի, որպեսզի երեխան զգա, որ նրանից են սկիզբ առնում իր մտավոր ուժերը:
5. Ընթերցանության հմտություններն անմիջականորեն ազդում են սովորողների ուսումնառության արդյունավետության և մոտիվացիայի վրա: Այս առումով առաջնային անհրաժեշտություն է դառնում հանրակրթության բոլոր աստիճաններում սովորողների ընթերցանության խրախուսումը:
6. Ընթերցումը անփոխարինելի միակ հմտությունն է, որն ուղղակիորեն ազդում է մտածողության զարգացման վրա: Այն վերլուծական կարողությունները զարգացնելու միջոց է, մարդու անմիջական զարգացման նախապայման , որը պիտի զարգացնել սկսած տարրական դպրոցից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հանրակրթության պետական չափորոշիչ և ծրագիր

2.Այբբենարան, 1-4 դասարանների մայրենիի դասագրքեր

3.Ղարիբյան Ա. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954

4. Աղայան Ղ. Երկեր,հատոր 4, Եր. 1950:

5. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա,Եր., «Զանգակ»,2006:

6. Հայ մանկավարժներ, XIX դար, գիրք I, «Հայպետուսմանկհրատ», Եր. 1958:

7. Հայ մանկավարժներ XIX-XX դար, գիրք II, «Հայպետուսմանկհրատ», Եր. 1961:

8. Տեր-Գրիգորյան Ա. Հայոց լեզվի մեթոդիկա «Լույս», Եր. 1986:

9. Խաչատրյան Ս. Ուսուցման արդյունավետ հնարներ, Եր. 2020